Հավելված N 2
ՀՀ կառավարության 2023 թվականի
հուլիսի 20-ի N 1243 - Ա որոշման

ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱԳԱԾՈՏՆ ԳՅՈՒՂԻ 02-017-0140-0147 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԽՄԵԼՈՒ ՋՈՒՐ, ԱՍՖԱԼՏԱՊԱՏ ՃԱՆԱՊԱՐՀ, ԲԶՋԱՅԻՆ ՀԵՌԱԽՈՍԱԿԱՊ, ՖԻՔՍՎԱԾ ԻՆՏԵՐՆԵՏ ԿԱՊ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Խմելու ջուր

1. Խմելու ջրով ապահովման համար անհրաժեշտ է կառուցել 5,300 մ երկարությամբ 75մմ տրամագծով ջրագիծ, որից 3,200 մետրը 8 մթն. PE խողովակով, իսկ 2,100 մետրը՝ 10 մթն. PE խողովակով:
2. Խմելու ջրագիծն անցնում է ամբողջությամբ համայնքային հողամասերով կամ պետական ճանապարհի երկայնքով:
3. 02-017-0140-0147 կադաստրային ծածկագրով հողամասը նախատեսված է ծառայելու որպես մթերման, պահեստավորման և վերամշակման գոտի:
4. Խմելու ջրագծի ընդհանուր արժեքը կազմում է **21,437,400** ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ

Անվանում	Քանակ	Չափի միավ.	Միավորի արժեք, ՀՀ դրամ	Գումար, ՀՀ դրամ՝ Ներառյալ ԱԱՀ
Խողովակ 90մմ 8 մթն	3,200	մետր	1,035	3,312,000
Խողովակ 90մմ 10 մթն	2,100	մետր	1,274	2,675,400
Խողովակների միացման աշխատանքներ	320	հատ	5,000	1,600,000
Հողային աշխատանքներ	5,300	մետր	2,500	13,250,000
Օդաթող օդահան սարք/վանտուզ/	10	հատ	60,000	600,000
Ընդամենը				**21,437,400**

Քարտեզ 1. Խմելու ջուր



Ասֆալտապատ Ճանապարհ

1. Հողամասի հեռավորությունն ասֆալտապատ ճանապարհից կազմում է 1,520 մետր: Բնականոն գործունեությունն ապահովելու համար ճանապարհի լայնությունը նախատեսվում է կառուցել 7 մետր, իսկ ասֆալտը բաղկացած է հետևյալ շերտերից. 4 սմ մանրահատիկ ասֆալտ, 6 սմ կոպիտ-հատիկավոր ասֆալտ, գլինցովկա (մանր մանրախիճով ցողված բիտում), 22 սմ մանրախիճ, 20-25 սմ ավազակոպչային նախապատրաստում՝ ռելիեֆը հարթեցնելու և թեքություններ ստանալու համար:
2. 02-017-0140-0147 կադաստրային ծածկագրով հողամասը նախատեսված է ծառայելու որպես մթերման, պահեստավորման և վերամշակման գոտի:
3. Մեկ քառակուսի մետր ասֆալտի ճանապարհի արժեքը կազմում է 18,000 ՀՀ դրամ: Ընդամենն անհրաժեշտ է կառուցել 1,520 x 7 = 10,620 մ^2 ասֆալտապատ ճանապարհ, որի արժեքը կկազմի **191,520,000** ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

Քարտեզ 2. Ասֆալտապատ Ճանապարհ



Բջջային հեռախոսակապ

1. Բջջային հեռախոսակապի ապահովման համար անհրաժեշտ է կառուցել աշտարակ և բազային կայան:
2. Աշտարակը և բազային կայանը նախատեսվում է կառուցել «Սմարթ Ագրո Սոլուշընս» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 02-017-0160-0274 կադաստրային ծածկագրով հողամասի տարածքում, որի համաձայնությունն առկա է/ կցված է/:
3. Աշտարակի և բազային կայանի անհրաժեշտ սարքավորումների արժեքը կազմում է 32,000,000 ՀՀ դրամ: Աշտարակը հոսանքով ապահովելու համար անհրաժեշտ է կառուցել նաև 200 մետր երկարությամբ հոսանքի գիծ և տեղադրել ենթակայան 250/10 (ԼՏԵ): Բջջային հեռախոսակապով ապահովման ծախսերը կկազմեն **38,500,000** ՀՀ դրամ:

Անվանում	**Քանակ**	**Չափի միավ.**	**Միավորի արժեք, ՀՀ դրամ**	**Գումար, ՀՀ դրամ՝ Ներառյալ ԱԱՀ**
Աշտարակ	1	հատ	32,000,000	32,000,000
Հոսանքի գիծ	200	մետր	5000	1,000,000
Ենթակայան 250/10 (ԼՏԵ)	1	հատ	5,500,000	5,500,000
Ընդամենը				**38,500,000**

Քարտեզ 4. Բջջային հեռախոսակապ



Ֆիքսված ինտերնետ կապ

1. Ֆիքսված ինտերնետ կապով ապահովման համար անհրաժեշտ է կառուցել օպտիկամալուխային ցանց:
2. Ինտերնետ կապի միացման ամենամոտ կետը գտնվում է Խոյ համայնքի Արագած գյուղում: Այն անցնում է համայնքի բնակելի տարածքով, համայնքային հողամասերով:
3. Ենթակառուցվածքի շինարարությունը ավարտվում է «Ագրոպրո» ՓԲԸ-ի հողամասով (կադաստրային ծածկագիր՝ 02-017-0140-0147):
4. Միացման կետից հեռավորությունը կազմում է 5,050 մետր: Ենթակառուցվածքի կառուցման ընդհանուր գումարը կազմում է շուրջ **12,000,000** ՀՀ դրամ:

Քարտեզ 5. Ֆիքսված ինտերնետ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

25.07.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ